



*California's protection & advocacy system*

# Տեղեկագիր հաշմանդամություն ունեցող անձանց դեմ խտրականություն կիրառելու վերաբերյալ. Մասնավոր և «հասարակական նշանակության այլ հաստատություններ»

*Նոյեմբեր 2018թ., Հրատ. #F110.10 -Armenian*

## **Դաշնային և նահանգային օրենքներ հաշմանդամություն ունեցող անձանց դեմ խտրականություն կիրառելու մասին**

Դաշնային և նահանգային օրենքներն արգելում են հաշմանդամության հիմքով խտրականության կիրառումը մասնավոր և «հասարակական այլ հաստատություններ» կողմից: Հաշմանդամություն ունեցող ամերիկացիների մասին դաշնային օրենքի (անգլ.՝ Americans with Disabilities Act, ADA) բաժին III-ն (ԱՄՆ օրենսդրություն, գլուխ 42, բաժիններ 12181 – 12189) արգելում է հասարակական նշանակության հաստատությունների կողմից հաշմանդամության հիմքով խտրականության կիրառումը: Հաշմանդամություն ունեցող անձանց աշխատունակության վերականգնման մասին օրենքի բաժին 504-ը արգելում է կիրառել խտրականություն հաշմանդամության հիմքով այն մասնավոր ընկերություններում, որոնք ստանում են դաշնային ֆինանսական միջոցներ:

Կալիֆորնիայի քաղաքացիական իրավունքների մասին Ունրուի օրենքը (Քաղաքացիական օրենսգրքի բաժիններ 54 – 55.32) արգելում է հաշմանդամության հիմքով խտրականության կիրառումը ցանկացած մասնավոր կազմակերպությունում: Պետական կառավարման մասին օրենքի բաժին 11135-ն արգելում է խտրականության կիրառումն այն մասնավոր ընկերությունների կողմից, որոնք ստանում են պետական ֆինանսավորում: Հաշմանդամություն ունեցող ամերիկացիների մասին օրենքի ցանկացած խախտում համարվում է նաև նահանգային օրենսդրության խախտում: Սակայն, որոշ հանգամանքներում, նահանգային օրենսդրությամբ կամ այլ դաշնային օրենքներով, ինչպիսին է օրինակ բաժին 504-ը, կարող է սահմանվել ավելի բարձր մակարդակի պաշտպանություն, քան սահմանում է Գլուխ III-ը:

ADA օրենքը «հասարակական նշանակության հաստատությունները» սահմանում է որպես մասնավոր և շահույթի նպատակ չհետապնդող ծառայություն մատուցող կազմակերպություններ, որոնք սեփականության իրավունքով ունեն, աշխատեցնում են կամ լիզինգով վարձակալում են տարածքներ, որոնք բաց են հասարակության կողմից օգտագործվելու համար: Դրանք են ռեստորանները, մանրածախ առևտրի խանութները, հյուրանոցները, կինոթատրոնները, մասնավոր դպրոցները, համաժողովների անցկացման սրահները, բժիշկների ընդունարանները, անտոնների կացարանները, տրանսպորտային կանգառները, գազանանոցները, սգո սրահները, ցերեկային խնամքի կենտրոնները և հանգստի ու ժամանցի վայրերը, ինչպիսիք են մարզադաշտերն ու մարզասրահները: Տրանսպորտային տեղափոխման մասնավոր ծառայությունների դեպքում նույնպես կիրառելի են տվյալն օրենքի դրույթները:

Խտրականություն է համարվում հաշմանդամություն ունեցող մարդկանց բացառումը, տարանջատումը և նրանց հանդեպ անհավասար վերաբերմունքը հասարակական նշանակության վայրերում: Սա ներառում է քաղաքականություններում ու գործելակերպերում փոփոխություններ չկատարելը (որը կոչվում է «ողջամիտ ձևափոխություններ» կամ «ողջամիտ հարմարեցումներ»), որով թույլ կտրվի հաշմանդամություն ունեցող անձին հավասարապես օգտվել որևէ մասնավոր ընկերության ծառայություններից ու տարածքներից: Այս փոփոխությունները պահանջվում են, եթե դրանք էապես չեն փոխում

մասնավոր ընկերության ապրանքների ու ծառայությունների բնույթը և չեն ենթադրում անհարկի ֆինանսական կամ վարչական բեռ:

Խտրականությունը նաև ներառում է «օժանդակ սարքեր և ծառայություններ» չտրամադրելը, երբ դրանք անհրաժեշտ են հաշմանդամություն ունեցող անձանց հետ արդյունավետ հաղորդակցում ապահովելու համար:

Օժանդակ սարքերի ու ծառայությունների օրինակներ են որակյալ սուրդոթարգմանիչների տրամադրումը, ենթագրերի մատուցումն իրական ժամանակում և կույրերի համար որակյալ ընթերցողների տրամադրումը: Դրանց մեջ են մտնում նաև մատչելի ձևաչափով փաստաթղթերի տրամադրումը, օրինակ մեծ տառերով տպած կամ Բրայլյան գրով փաստաթուղթը, տեքստ կարդացող ծրագրերի համար համատեղելի ձևաչափով փաստաթղթերը կամ տպագիր տեղեկատվության ձայնագրությունը: Մասնավոր ընկերություններից չի պահանջվում տրամադրել օժանդակ սարքեր և ծառայություններ, եթե դրանց տրամադրումը էապես կարող է փոխել նրանց կողմից առաջարկվող ապրանքների ու ծառայությունների բնույթը կամ ենթադրել անհարկի ֆինանսական կամ վարչական բեռ:

Հաշմանդամության հիմքով խտրականություն կիրառելու, ողջամիտ ձևափոխությունների և արդյունավետ հաղորդակցման իրավունքի մասին մանրամասն տեղեկատվություն կարող եք գտնել այստեղ.

ԱՄՆ Արդարադատության վարչության կայքէջ՝

- Տեղեկատվություն և տեխնիկական աջակցության ADA-ի վերաբերյալ. <https://www.ada.gov/ta-pubs-pg2.htm>
- Արդյունավետ հաղորդակցման տեղեկատու. <https://www.ada.gov/effective-comm.htm>

Կալիֆորնիայի աշխատանքի տեղավորման և կացարանով ապահովման հարցերում խտրականության արգելման վարչության (անգլ.՝ California Department of Fair Employment and Housing, DFEH) կայքէջ՝

- Մասնավոր հաստատություններ. <https://www.dfeh.ca.gov/business-establishments/>

- Մասնավոր հաստատություններ/Հասարակական նշանակության հաստատությունների մասին ՀՏՀ.  
[www.dfeh.ca.gov/resources/frequently-asked-questions/business-establishments-public-accommodations-faqs/](http://www.dfeh.ca.gov/resources/frequently-asked-questions/business-establishments-public-accommodations-faqs/)

Հաշմանդամություն ունեցող անձը կարող է բախվել խտրականության նաև այն դեպքում, եթե մասնավոր ընկերության տարածքը նրա համար ֆիզիկապես հասանելի չէ: ADA-ը և Կալիֆորնիայի օրենսդրությունը տրամադրում են ճարտարապետական ստանդարտներ նոր և ձևափոխված շինությունների համար և պահանջում են, որ մասնավոր ընկերությունները առկա շենքերից վերացնեն ֆիզիկական արգելքները, եթե դա առանց հապաղման հնարավոր է անել: Ճարտարապետական մատչելիության մասին մանրամասն տեղեկատվություն կարող եք գտնել այստեղ՝

- ԱՄՆ Հասարակական վայրերի մատչելիության ապահովման խորհրդի կայքէջ՝ [www.access-board.gov](http://www.access-board.gov)
- ԱՄՆ Արդարադատության վարչության Փոքր ձեռնարկությունների ուղեցույց՝ <https://www.ada.gov/regs2010/smallbusiness/smallbusprimer2010.htm>
- Կալիֆորնիայի նահանգային ճարտարապետի բաժնի կայքէջ՝ <http://www.dgs.ca.gov/dsa/Programs/progAccess.aspx>
- Կալիֆորնիայի Հաշմանդամություն ունեցող անձանց համար մատչելիության ապահովման հարցերի հանձնաժողովի կայքէջ՝ [www.cdda.ca.gov](http://www.cdda.ca.gov)

### **Ողջամիտ ձևափոխությունների ձեռքբերում / Օժանդակ սարքերի և ծառայությունների ստացում**

Ստորև ներկայացված են այն քայլերը, որոնք անհրաժեշտ է ձեռնարկել որևէ մասնավոր ընկերությունից ողջամիտ ձևափոխություն կամ օժանդակ սարք կամ ծառայություն ստանալու համար.

1. Գրեք ողջամիտ ձևափոխությունների / օժանդակ սարքերի ու ծառայությունների դիմում: Ձեր դիմումը պետք է բացատրի հետևյալը.
  - այն, որ դուք հանդիսանում եք հաշմանդամություն ունեցող անձ (կարիք չկա նշելու ձեր հաշմանդամության անունը),
  - այն ձևերը, որոնցով ձեր հաշմանդամությունը խանգարում է ձեզ ձեռք բերել կամ օգտվել տվյալ մասնավոր ընկերության ապրանքներից կամ ծառայություններից,
  - այն հատուկ ձևափոխությունները / օժանդակ սարքերն ու ծառայությունները, որոնց կարիքը դուք ունեք, և
  - այն ամսաթիվը, մինչև որը ակնկալում եք ստանալ պատասխանը:
2. Եթե ձեր հաշմանդամությունը և ողջամիտ ձևափոխությունների / օժանդակ սարքերի ու ծառայությունների կարիքը ակնհայտ չեն, ձեր բժշկից կամ մեկ այլ բժիշկ-մասնագետից վերցրեք ուղեկցող նամակ: Այդ նամակում պետք է բացատրվի, թե ինչու է ձեր հաշմանդամության պատճառով ձեզ անհրաժեշտ պահանջվող ձևափոխությունը:
3. Ձեր գրավոր դիմումը և ըստ անհրաժեշտության՝ ուղեկցող նամակն ուղարկեք համապատասխան մասնավոր ընկերությանը:

Ողջամիտ ձևափոխության / օժանդակ սարքերի ու ծառայությունների պահանջով դիմում-նամակի նմուշը և ուղեկցող նամակի նմուշը բերված են այս տեղեկատուի վերջում:

### **Վարչական բողոքներ**

ADA օրենքի Բաժին III-ն ի կատար է ածվում Արդարադատության վարչության կողմից: Կալիֆորնիայի Ունրուի օրենքը, Հաշմանդամություն ունեցող անձանց մասին օրենքը և պետական կառավարման օրենքի Բաժին 11135-ը ի կատար են ածվում DFEH-ի կողմից:

Եթե կարծում եք, որ ձեր նկատմամբ կիրառվել է խտրականություն, կարող եք ներկայացնել վարչական բողոք Արդարադատության վարչությանը ըստ դաշնային օրենսդրության կամ DFEH՝ ըստ նահանգային օրենսդրության: DFEH-ի բողոքները պետք է ներկայացվեն խտրականության կիրառումից հետո մեկ տարվա ընթացքում: DFEH-ի որոշման դեմ կարող եք բողոքարկել DFEH-ի տնօրենին՝ որոշումն ընդունելու օրվանից հետո 10 օրվա ընթացքում: [See 2 C.C.R. Բաժին 10033:](#)

Բաժին III-ով նախատեսվող բողոքները Արդարադատության վարչությանը կարելի է ներկայացնել ցանկացած ժամանակ: Սակայն լավագույն տարբերակը կլինի այն, որ բողոքները ներկայացվեն որքան հնարավոր է շուտ, քանի որ ժամանակ անցնելու հետ մեկտեղ ավելի է դժվարանում խտրականության կիրառումը ապացուցելը: Արդարադատության վարչության և DFEH-ի կոնտակտային տվյալները բերված են ստորև:

**Արդարադատության վարչությանն ուղղվող բողոքների համար՝**  
U.S. Department of Justice  
Civil Rights Division  
950 Pennsylvania Avenue, N.W.  
Disability Rights Section – 1425 NYAV  
Washington, D.C. 20530

Առցանց բողոքներ՝ [https://www.ada.gov/filing\\_complaint.htm](https://www.ada.gov/filing_complaint.htm)

Հեռախոսով բողոքներ՝ (800) 514-0301  
Հեռատիպով բողոքներ՝ (800) 514-0383

**DFEH-ին ուղղված բողոքների համար՝**  
Առցանց բողոքներ՝ <https://www.dfeh.ca.gov/filing-a-complaint-online/>  
Հեռախոսով բողոքներ՝ (800) 884-1684  
Հեռատիպով բողոքներ՝ (800) 700-2320  
Փոստով՝ զանգահարեք (800) 884-1684 հեռախոսահամարով և պահանջեք համապատասխան բողոքի ձևը, որպեսզի այն լրացնելուց հետո տպեք և հետ ուղարկեք: Հատկացրեք լրացուցիչ ժամանակ փոստով ուղարկված բողոքը տեղ հասնելու և դրան ընթացք տալու համար:

Որոշ տեսակի մասնավոր ընկերությունների համար կարող է հնարավոր լինել բողոք ներկայացնել որևէ արտոնագրային մարմնի կամ մեկ այլ նահանգային կամ դաշնային գործակալությանը, որոնք ունեն տվյալ տեսակի բիզնես-գործունեությանն առնչվող իրավասություն: Օրինակ՝ գաղտնիության պահպանման հետ կապված բողոքները կարելի է ներկայացնել ԱՄՆ Սոցիալական ապահովության ծառայությունների վարչության քաղաքացիական իրավունքների պաշտպանության գրասենյակին:

### **Գործի վարույթ դատական ընթացակարգով**

Վերևում նշված օրենքների խախտումները կարող են քննվել նաև մասնավոր դատական հայցերի միջոցով: Խնդրում ենք տեղյակ լինել, որ գործում են վաղեմության ժամկետներ, որոնք սահմանափակում են դատական քննության համար հայցի ներկայացման ժամկետները և դուք հավանական է կորցնեք հայց ներկայացնելու հնարավորությունը, եթե չդիմեք այդ վաղեմության ժամկետների ընթացքում: Այս վերջնաժամկետները կարող են լինել մինչև երկու տարի՝ սկսած խտրականության կիրառման օրվանից: Եթե հետաքրքրված եք դատական հետաքննությամբ, դուք պետք է հնարավորինս շուտ խորհրդակցեք փաստաբանի հետ:

Եթե նպատակ ունեք ստանալ վնասի դրամական փոխհատուցում մինչև 10.000 ԱՄՆ դոլարի չափով, ապա մեկ այլ տարբերակ է խտրականության դեպքի համար Փոքր հայցերով զբաղվող դատարանին բողոք ներկայացնելը: Այս դեպքում ևս կգործեն վերևում քննարկված վաղեմության ժամկետները: Փոքր հայցերով զբաղվող դատարանին դիմելիս՝ դուք չեք կարող վարձել փաստաբան: Սա Կալիֆորնիայի Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների հարցերով զբաղվող կազմակերպության այն հրապարակման հղումն է, որում բացատրվում է խտրականության դեպքերի համար Փոքր հայցերով զբաղվող դատարանին դիմելու կարգը՝ <https://www.disabilityrightsca.org/publications/a-guide-to-small-claims-court-how-to-sue-if-a-business-or-landlord-discriminates>

## Ողջամիտ ձևափոխություններ / Օժանդակ սարքեր և ծառայություններ պահանջելու նամակի նմուշ

[Ամսաթիվ]

Հարգելի [մասնավոր ընկերության անվանում],

Ես դիմում եմ Ձեզ իմ [հաշմանդամության / հաշմանդամությունների] համար [ողջամիտ ձևափոխություններ / օժանդակ սարքեր կամ ծառայություններ] խնդրելու նպատակով:

Ես [հանդիսանում եմ / ցանկանում եմ դառնալ] [մասնավոր ընկերության անվանումը]-ի հաճախորդ: Իմ հաշմանդամության համար ինձ անհրաժեշտ է հետևյալը. [Թվարկել ձևափոխությունները / օժանդակ սարքերը կամ ծառայությունները]:

Իմ [բժիշկը / հոգեբույժը / հոգեբանը / թերապևտը / սոցիալական աշխատողը / մասնագիտական հիվանդությունների բժիշկը / այլ անձ (նկարագրել)] այս ձևափոխությունները համարել է անհրաժեշտ իմ հաշմանդամության համար: Կից ներկայացնում եմ [բժշկի կամ մասնագետի անունը]-ի նամակը:

Դաշնային և նահանգային օրենքներով պահանջվում է, որ մասնավոր ընկերությունները տրամադրեն ողջամիտ ձևափոխություններ / օժանդակ սարքեր կամ ծառայություններ այն անձանց, ովքեր ունեն հաշմանդամություն: Խնդրում եմ պատասխանել այս դիմումին մինչև [ամսաթիվ]-ը: Հարցեր ունենալու դեպքում ինձ հետ կարող եք կապվել [նշեք ձեր հեռախոսահամարը և / կամ էլ. փոստի հասցեն]:  
Շնորհակալություն:

Հարգանքով,

[ձեր անունը]

[ձեր հասցեն]



## Ուղեկցող նամակի նմուշ

[Ամսաթիվ]

Հարգելի [մասնավոր ընկերության անվանում],

Ես հանդիսանում եմ [անուն, ազգանուն]-ի [բժիշկը / հոգեբույժը / հոգեբանը / թերապևտը / սոցիալական աշխատողը /մասնագիտական հիվանդությունների բժիշկը] և ծանոթ եմ նրա առողջական վիճակին:

[Նա] ունի այնպիսի հաշմանդամություն, որը պատճառում է որոշակի ֆունկցիոնալ սահմանափակումներ: Այդ սահմանափակումներն են՝ [թվարկել դիմումի մեջ նշված ողջամիտ ձևափոխությունը / օժանդակ սարքը կամ ծառայությունը պահանջող ֆունկցիոնալ սահմանափակումները]:

[Դիմումում նշված ողջամիտ ձևափոխումը / օժանդակ սարքը և ծառայությունը] անհրաժեշտ է [անուն, ազգանուն]-ին [մասնավոր ընկերության անվանում]-ի [ծառայություններից օգտվելու համար դիմելու / օգտվելու հավասար իրավունք ունենալու] համար: [Նկարագրել, թե ձևափոխությունը / օժանդակ սարքերը և ծառայությունները ինչպես են օգնելու կամ օժանդակելու տվյալ անձին]:

Շնորհակալություն այս [ողջամիտ ձևափոխությունը / օժանդակ սարքը և ծառայությունը] [անուն, ազգանուն]-ին տրամադրելու համար:

Հարգանքով,

[անուն, ազգանուն և պաշտոն]

Վերջին թարմացում՝ 31-ը հոկտեմբերի, 2018թ.

---

Մենք ցանկանում եք լսել Ձեր կարծիքը: Խնդրում ենք պատասխանել մեր հրապարակումների մասին հետևյալ հարցման հարցերին և տեղեկացնել մեզ, թե ինչպես ենք մենք աշխատում: [\[Անցնել հարցումը\]](#)

Իրավական օգնություն ստանալու համար զանգահարել 800-776-5746 հեռախոսահամարով կամ լրացնել [օգնության դիմումի ձևը](#): Մյուս բոլոր հարցերով զանգահարել 916-504-5800 (Հյուսիսային Կալիֆորնիա), 213-213-8000 (Հարավային Կալիֆորնիա) հեռախոսահամարներով:

*Կալիֆորնիայում հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանության կազմակերպությունը ֆինանսավորվում է տարբեր աղբյուրներից, հովանավորների ամբողջական ցանկը տե՛ս այստեղ.*  
[http://www.disabilityrightsca.org/  
Documents/ListofGrantsAndContracts.html](http://www.disabilityrightsca.org/Documents/ListofGrantsAndContracts.html):